ՉԵԽԻԱՅԻ ԲՌՆՈ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Հոկտեմբերի 6-ին Հայ Առաքելական Եկեղեցու Չեխիայի հոգևոր հովիվ Տ. Բարսեղ վարդապետ Փիլավչյանի նախաձեռնությամբ Բռնո քաղաքում բացվեց հայկական շաբաթօրյա դպրոց:

Դպրոցի բացումը տեղի ունեցավ «Սոզե» հասարակական կազմակերպության սրահում՝ Հայր Բարսեղի օրհնության խոսքով: «Աստված մեզ տվեց Այբուբեն, որ չմոռանանք և պահպանենք այն, հատկապես հայրենիքից հեռու ապրողներս»,- դիմելով ներկաներին՝ ասաց Հայր Սուրբը: Նշելով հայոց Գրերի Գյուտի պատմական նշանակությունը և Հայաստանում քրիստոնեության տարածման գործում ունեցած կարևորությունը՝ Հայր Սուրբը հանդիսությանը ներկա ծնողներին կոչ արեց աջակցել դպրոցի կայացմանն ու իրենց երեխաների մեջ սեր և հավատարմություն դաստիարակել դեպի մայրենի լեզուն ու հայ մշակույթը:

Այնուհետև ուսուցիչներին ներկայացնելուց հետո Հայր Բարսեղը տեղեկացրեց, որ դպրոցում երեխաները կսովորեն հայոց լեզու և գրականություն, հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պատմություն, պարարվեստ ու երաժշտություն: Առաջին օրը արձանագրվեցին 30 հայորդիներ:

Ներկա դպրոցականներին և նրանց ծնողներին շնորհավորեց նաև «Օրեր» ամսագրի գլխավոր խմբագիրը՝ փոքրիկներին բաժանելով ամսագրի վերջին համարներից, իսկ Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցի կողմից ուղարկված դասագրքերը Հայր Բարսեղը հանձնեց ուսուցիչներին:

Նշենք, որ Բռնոն Չեխիայի երկրորդ մեծ քաղաքն է, որտեղ ապրում են 50-ից ավելի հայ ընտանիքներ:

«ՕՐԵՐ» ԱՄՍԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ